ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ

989. ԵՈՒՆԱՎ ԵԿԵՂԵՑԻ. Մուտքից վերև.

Կառուցավ ՍԲ եկեղեցին ծախքով և աշխատությամբ Գյուլագարակ գեղջ 1814 ամի:

ՀՊԿՍ

Ծանոթ. Կրաշաղախ ամրահյուս պատերով եկեղեցին կործանվել է 1988-ի երկրաշարժից: Զարմանալիորեն համեմատաբար քիչ է տուժել հարավից կցարկված չորս սյուներով կրկնահարկ զանգակատունը:

ԳԱՐԳԱՌ

990. ԽԱՉՔԱՐ. գյուղի Ս.Հովհաննես եկեղեցու բակի գերեզմանոցում, մակերեսին՝ 4, քիվի աջ լանջին՝ 1 տող.

ՍԲ
Ճ|Ա|ՂԿ|ԵԱ|Լ Խ|Ա|ՉՍ
ՕԳ|ՆԵԱ| Մ|Ե|Զ:
1854
ԻԿՄԱԿՏ Է ԱՋՏ|Ե|Ղ:

Ծանոթ. ԺԹ դարում լրիվ վերակառուցված գմբեթակիր եկեղեցին շրջապատված է հին գերեզմանոցով, ուր թաղումներ են արվել մինչև վերջին տարիները: Սույն խաչքարը հնաոճ է, լայն բացված բուսական թևերով, համաչափություններով, կողային կիսասյուներով, որոնք հիշեցնում են հատկապես Լոռի բերդի խաչքարերը: Խաչակոթունի տակ, բլրի (Գողգոթա) ներքո Ադամի գլխաքանդակն է:

Այստեղ կան նույն ոճական համամասնությամբ այլ խաչքարեր ևս ԺԵ-ԺՂ դդ.:

ՎԱՐԴԱԲԼՈՒՐ

Հին բնակավայր է՝ հարուստ պատմական կարևոր հուշարձաններով, որոնցից գլխավորներն են.

Ա. ***Զգրաշեն եկեղեցի.*** գտնվում է գյուղից 1 կմ հյուսիս. Տ-ձև հատակագծով, IV-V դդ. բազիլիկ եկեղեցի է: Ունի երեք մուտք, բեմին արտաքուստ կցված են պայտաձև կամարներ, երկու խորաններ, իսկ պատուհանի պսակները զարդարված են խաղողի ոստերով և տերևներով: Արտաքին պատերին պահպանվել են դուրս ցցված պահունակներ, որոնցից հարավային պատի վրա եղածները կենդանիների գլուխների տեսք ունեն: Այդ հենակները վկայում են երբեմնի արտաքին սրահի գոյության մասին: Թաղն ամբողջովին փլված է. արձանագրություն չունի:

Բ. ***Եկեղեցի և գերեզմանատուն.*** վայրը կոչվում է «Տորմակաղուռ», որպիսի անվամբ հայտնի է նաև եկեղեցին: Գտնվում է Զգրաշենի վանքից արևելք, մոտ 3 կմ հեռու՝